**<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով**
**շրջանակային համաձայնագրերի միջոցով**
**գնում կատարելու ընթացակարգի հնարավոր**
**մասնակիցների ղեկավարներին**

Հարգելի մասնակից

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ Արարատի մարզի <<Դալարի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ:

Սույն հրավերի ծածկագիրն է հանդիսանում ԴԱԼՄԱՆԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-14:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Արարատի մարզ, ք. Արտաշատ, Օգոստոսի 23 փողոց, շենք 109, 3-րդ հարկ, 13-րդ սենյակ հասցեով, մինչև 2014թ.-ի հունիսի 17-ը, ժամը՝ 10:00-ը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն Արարատի մարզ, ք. Արտաշատ, Օգոստոսի 23 փողոց, շենք 109, 3-րդ հարկ, 13-րդ սենյակ հասցեով, 2014թ.-ի հունիսի 17-ին, ժամը 10:00:

Գնման առարկա է հանդիսանում <<Դալարի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռք բերումը:

<<Դալարի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի (48 չափաբաժիններից կազմվծ) տեխնիկական բնութագրերը, գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացվում է սույն հրավերին կից (Հավելված 3):

Մասնակիցները ներկայացնում են իրենց կողմից հաստատված, համապատասխանաբար մեկ բնօրինակ և երկու պատճեններից կազմված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված 2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<<Դալարի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի գնումների մասով էլեկտրոնային փոստի հասցեն է՝ specialist_pp@bk.ru:

**Հարգանքով՝**

**Տնօրեն՝** **Թ. Հովհաննիսյան**